

նախանձելի վիճակ մը չկրնար ունենալ, թաղային վարժարան մ'ըլլալուն պատճառաւ:

Այս թաղին եկեղեցւոյն ժամակոչներն այնքան արթուն անձեր են, որ ուրիշ թաղերու գողերուն եթէ եկեղեցական անօթ պէտք ըլլայ՝ թաղիս եկեղեցիէն կ'առնեն կտանին:

Թաղիս մէջ դրամով հարուստ ազգային չկայ, բայց սրտով ամենն ալ հարուստ են: Իրենց պարտաւորութիւնը կճանաչեն՝ եթէ իրենց ներկայացունես զայն, եւ ազգօգուտ ձեռնարկութիւններու համար իրենց լուման չեն մերժեր:

Թաղս ծովեզերեայ ըլլալով՝ թաղեցին լաւ լողալ գիտէ... օղիի մէջ:

Կիները աշխատասէր են եւ եթէ պատուհաններուն նայիս՝ հոս ամեն օր լաթ կը լուան. վասնզի իրենց տանը պատուհաններէն ամեն օր ձերմակեղէն կախուած են:

Օդը մեղմ է, թաղեցւոյն բնաւորութեանը պէս. իսկ երբ հարաւը փչէ եւ ծովն ալեկոծէ՝ թաղեցին ալ ծովուն հետ կկորուսնէ իւր հանդարտ բնաւորութիւնը եւ ալիքներուն պէս կկատաղի:

Այս միջոցին Նարլը քաբուցիի մը առջեւէն մի քալեր փողոցի մէջ զքեզ կտապալէ եւ կ'անցնի կ'երթայ ալիքի պէս:

ԼԱ.

ՊԷՅՔՕԶ

Կեցցէ՛ Սահմանադրութիւն...:

«Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,

Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք»:

Առաջին անգամ Պէյքօզի մէջ արտասանուեցան վերոյիշեալ խօսքերն. բայց չորսօրէինգ տարի կայ, որ բարեւը կտրեցինք Պէյքօզին եւ ազգային յիմարանոցին առջեւ կու տանք Սահմանադրութեան մեր բարեւը:

Շատ նշանաւոր եղած է Պէյքօզ սահմանադրութեան տարեդարձային այն հանդէսներով, որք տեղի կ'ունենային իւր դաշտավայրին վրայ, ուր կհաւաքուէին ազգասէր հայերն եւ իրարու բերնէն կյափշտակէին ճառերը, գինիի գաւաթներն եւ Սահմանադրութիւնը:

Բնաւ նշանաւոր եղած չէ իւր վարժարանովն, որ հեռի է աշակերտները գոհացնելէ: